

« Գյուղատնտեսության նախարարին կից  
հասարակական խորհրդի նախագահ  
պարոն Սերգո Կարապետյանին

Հրաչյեկ Զաքարյան -ից  
(դիմորդի անուն, ազգանուն)

Զեյն, Արաբկիր 37փ. 3/2, 4/7  
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)  
093-42-51-44

Շաքարյան Կ. Արսենյան Արսենյան Շաքարյան  
(կազմակերպության լրիվ անվանումը, պետ. գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Կարապետյան,

Խնդրում եմ Զեյն, Բեյ ընդգրկել « Գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:  
Կից ներկայացնում եմք պահանջվող փաստաթղթերը.

1. Անկախագրի պատճեն
2. Ամբիոնի ցանկագրի
3. Չեզոք թրեյդեր ընտրելու շաքար
4. Շաքարային վերամշակումը 22 9% ցուց. և կրթ. ծախս. վերաբերյալ
5. Վերջին 5 չափերի մեք. կապիտալ. ցանկ
6. \_\_\_\_\_

Դիմող՝ Զեյն Բեյ Հրաչյեկ Զաքարյան  
(ստորագրություն, անուն, ազգանուն)

<03> Նոյեմբեր 20 16 թ.

ՀՀ Գյուղ. նախ.  
վարչատնտեսական վարչություն  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ  
03. 05. 20/Եր.  
Մուկ N Ա/5250-16

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի Հանրապետության պարենային ապահովման բնական և տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ուղղությամբ գործում իրականացվող քաղաքականությունը վերապահված է գյուղատնտեսության նախարարությանը:

Եվ նրա կողմից մշակված, ընդունված որոշումներից մեծ չափով պայմանավորված են ագրո-արդյունաբերական համալիրի տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունքները: Այս առումով, ագրարային ոլորտի տեսական և գործնական կանոնություններ ունեցող շահագրգիռ անձանց ներուժի, մասնագետների, պետական և հասարակական հատվածի համախմբման միջոցով համատեղ ընդունված որոշումները և դրանց իրականացումը ավելի կարող է ապահովել առավել բարձր արդյունքներ:

Նկատի ունենալով այս մոտեցումները, կարծում եմ, որ գյուղ. նախարարին կից հասարակական խորհրդի ձևավորումը ներկայիս պահանջներից մեկն է, քանի որ բազմակարծության հաշվառման արդյունքում ընդունված որոշումների սխալները ավելի փոքր կլինեն, մշակվող ու իրականացվող քաղաքականությունը կգնահատվի բոլոր խմբերի կողմից, ապահովելով նաև հետադարձ կապերը:

Համոզված լինելով, որ հասարակական խորհուրդը կունենա արդյունավետ գործունեություն, ես դիմել եմ ընդգրկվելու նրա կազմում, քանի որ ունեմ երկամյա փորձ և առաջարկություններ գյուղատնտեսության զիտության, կրթության և արտադրության ոլորտներում, որոնք հնարավորինս ընդունվելու դեպքում կօգտագործվեն ագրարային քաղաքականության մշակման ընթացքում:

Ունենալով սերտ կապեր ֆերմերների, արտադրողների, վերամշակողների, գործարարների, գիտնականների և մի շարք այլ հասարակական կազմակերպությունների հետ, որտեղ ձևավորվում են բազմաթիվ օգտակար

առաջարկություններ, տեսակետներ, կարծիքներ, գյուղ. նախարարությունում քննարկվող այն հարցերի վերաբերյալ, դրանք կամփոփվեն և կներկայացվեն խորհրդի քննարկմանը:

Համոզված եմ, որ խորհրդի կազմում, որ ինչպես իմ, այնպես էլ մյուս շահագրգիռ ներկայացուցիչների ներգրավման դեպքում կծագեն նաև նոր մտքեր, կբացահայտվեն նոր գործոններ և մի շարք բարդ թվացող խնդիրներ կստանան իրենց ռացիոնալ լուծումները:

Ակնկալում եմ, որ իմ մասնակցությամբ կարող եմ օբյեկտիվ մոտեցումներով, գիտական և գործնական խորը մեկնաբանումներով նպաստել այնպիսի հարցադրումների պարզաբանումները, որոնք բխում են ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման առաջնահերթություններից, նպատակներից և խնդիրներից:

Չնայած գյուղ. նախարարության գործադրած ջանքերին, որոնց շնորհիվ նշանակալի աճ է տեղի ունեցել արտադրության բոլոր ոլորտներում, դեռևս մի շարք գնագավառներում՝ օրենսդրության կատարելագործման, ծրագրերի մշակման ու դրանց մոնիտորինգի, ագրարային քաղաքականության արդյունավետության գնահատման, ագրարային ոլորտում արդյունավետ կառավարման, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողներին ֆերմերային տնտեսությունների պետական աջակցության, գյուղատնտեսության ոլորտում հաշվապահական հաշվառման և ապահովագրական համակարգի ներդրման ուղղությամբ ծավալուն աշխատանքներ և հիմնավորված մոտեցումներ են անհրաժեշտ, որի համար կցանկանայի մասնակցել դրանց ուղղությամբ միջոցառումների մշակմանը:

Ակնկալում եմ Ձեր աջակցությունը:

Հարգանքով՝

03.05. 2016թ.



Հ. Ս. ՋԱՎԱԴՅԱՆ

## ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ

### Հ.Ս. ԶԱՎԱԴՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծնվել է 1946 թվականին դեկտեմբերի 1-ին Սիսիանի Դարբաս գյուղում: Սովորել է նույն գյուղի միջնակարգ դպրոցում և այն ավարտել 1964 թվականին: Մեկ տարի աշխատել է գյուղի կոլտնտեսությունում:

1970 թվականին ընդունվել և ավարտել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի այգեպտղաբանջարաբուծական ֆակուլտետի էկոնոմիկայի բաժինը և ագրոնոմ-տնտեսագետի որակավորմամբ ընդունվել աշխատանքի Սիսիանի գյուղատնտեսական վարչությունում:

Աշխատել է “Գյուղ. արտադրության կազմակերպման” ամբիոնում ասիստենտի պաշտոնում /1975-1987թթ./, այնուհետև ավագ դասախոս /1987-1991թթ./, դոցենտ /1991-ից/, իսկ 1995-1998թթ-ին՝ ՀԳԱ “Գյուղ արտադրության կազմակերպման” ամբիոնի վարիչի տեղակալ, 2006թ. հոկտեմբեր ամսից ընտրվել է «Ագրարային քաղաքականության և խորհրդատվության» ամբիոնի վարիչի պաշտոնում և 2009 թվականից մինչև օրս «Ագրոբիզնես և շուկայաբանություն» ֆակուլտետի ղեկան:

1987 թվականին պաշտպանել է թեկնածուական թեզ և ստացել տնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 1991 թվականին նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1999 թվականին դեկտեմբերի 4-ից ընտրվել է Հայաստանի գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, ՀՀ Կայուն զարգացման ծրագրի համակարգող խորհրդի անդամ, 2004 թվականին մրցույթով ընտրվել է «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի, այնուհետև շահառուների խորհրդի և համակարգող խորհրդի անդամ::

Մասնակցել է Մոսկվայի /1982թ, 1985թ, 1990թ./ և Կիևի /1979թ/ գյուղատնտեսական ակադեմիաներում դասախոսների համար կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Սերտ կապեր է ունի ագրարային ոլորտի գիտնականների, հանրապետության ֆերմերային տնտեսությունների, ԳԱՄԿ-ի մասնագետների հասարակական կազմակերպությունների հետ:

Ունի 58 գիտական հոդվածներ, ներկայումս ուսումնասիրում է ՀՀ գյուղատնտեսության նյութա-տեխնիկական ապահովման և արտադրական սպասարկման կազմակերպման կատարելագործման ու կոոպերացման հիմնախնդիրները, քաջատեղյակ է ներկայումս ՀՀ-ում իրականացվող ագրարային քաղաքականությունը և զարգացման ռազմավարությունը:

Միայն վերջին 5 տարիներին հրատարակել է 16 գիտական հոդվածներ, իսկ յուրաքանչյուր տարի «Ագրոլրատու» շաբաթաթերթում 3-5 խորհրդատվական հոդվածներ:

Մշակել և հրատարակել է «Հարյուր ու մեկ հարց ու պատասխան կոոպերատիվների մասին» և «Ինչպես գրել դրամաշնորհային ծրագիր» բրոշյուրները, համահեղինակ է «Գյուղ. արտադրության կազմակերպում» առարկայի ուսումնական ձեռնարկի և 18 ուսումնա-մեթոդական ցուցումների:

Տարիներ շարունակ նա կատարել է ակտիվ հասարակական աշխատանքներ, ընդգրկվելով ՀՀ գյուղ. նախարարության և Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի բազմաթիվ հանձնախմբերի կազմում:

2014 թվականին «Գյուղ. կոոպերատիվների կառավարում» թեմայով դասախոսությամբ հանդես է եկել Գեղարքունիքի ֆերմերների խմբում:

2015 թվականին ՀՀ գյուղ. նախարարի հանձնարարությամբ նշանակվել է «Գյուղ. կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի մշակման աշխատանքային խմբի կազմում, կատարել բազմաթիվ առաջարկություններ, որոնք ընդունվել են և ընդգրկվել օրենքի հիմնադրույթներում: Հանդիսանում է «Ագրոզիտություն» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ:

Հիմնական աշխատանքային գործունեության հետ մեկտեղ հասարակական կարգով կատարում է ֆերմերների Ազգային Միավորման նախագահի տեղակալի պարտականությունները, հանդիսանում է ՀՀ նախագահին կից Հանրային խորհրդի «Գյուղատնտեսության և բնապահպանական հարցերի հանձնախմբի» անդամ:

Պարգևատրվել է ՀՀ Ազգային ժողովի նախագահի պատվոգրով, ՀՀ գիտության և կրթության նախարարի «Ոսկե մեդալով», ՀՀ վարչապետի «Ոսկե մեդալով», Ֆերմերների ազգային միավորման «Ոսկե մեդալով»: Ունի միջազգային գիտաժողովներին և վերապատրաստման դասընթացներին մասնակցության երկու տասնյակ հավաստագրեր:

Տիրապետում է անգլերեն և ռուսերեն լեզուների:

Ամուսնացած է, ունի երկու երեխա՝ դուստր և որդի:



ՀՐԱՉԻԿ ՍԱՐՈՒԽԱՆԻ ԶՍՎԱԴՅԱՆ

03.05.2016թ.

## ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ անկախացումից հետո բազմակողմանի և խորը տեղաշարժեր տեղի ունեցան երկրի տնտեսությունում: Մասնավորապես այդ տեղաշարժերը էլ ավելի ուժեղ արտահայտվեցին ագրարային ոլորտում, որտեղ ոչ միայն տնտեսական, այլ արմատական կառուցվածքային ու կառավարման փոփոխությունները ընդգրկեցին բոլոր բնագավառները: Սկսված գործընթացների համար հիմք ընդունելով այն, որ ագրոպարենային համակարգը ոչ միայն կարևոր տեղ ունի հանրապետության տնտեսության մեջ և վճռական դեր կարող է խաղալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և պարենային ապահովման գործում, իրականացվեցին նշանակալի քայլեր, բարեփոխումներ, որոնց շնորհիվ հնարավորինս մեղմացվեցին առաջացած դժվարությունները գյուղատնտեսական արտադրանքի արտադրության, պահպանման վերամշակման, իրացման և սպառման, ինչպես նաև սննդի անվտանգության ապահովման բնագավառում: Գյուղատնտեսությունը դիտարկվեց ոչ միայն որպես տնտեսության առաջատար ճյուղի, ոչ միայն բիզնեսի գործունեության բնագավառի, այլ մարդկային ներուժի պահպանման, բնակչության և մարդկային կապիտալի կենսագոյության նախապայմանի:

Առաջին հերթին բարեփոխումների հիմքում դրվեց հողի սեփականաշնորհումը, որի արդյունքում ձևավորվեցին շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնց բաժին է ընկնում 1.4 հեկտար վարելահող, որոնք արտադրական գործունեությունն իրականացնում են 3-4 հողակտորների վրա: Միջին հաշվով մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում 1.5 գլուխ խոշոր, 1.7 գլուխ ոչխար, իսկ 5 տնտեսությանը 1 գլուխ խոզ:

Չանդրադառնալով առկա խոչընդոտներին և պատճառներին, կցանկանայի նշել, որ ներկայումս ունեցած ձեռք բերումները հեռու են բավարարալ լինելուց, քանի որ տնտեսությունների մեծ մասը չեն կարողանում կիրառել առաջավոր տեխնոլոգիաներ, ցածր է մեքենայացման մակարդակը և արտադրության արդյունավետությունը, գերակշռում է ձեռքի աշխատանքը, արտադրանքի բարձր ինքնարժեքի պատճառով չի կարող լինել շուկայում:

Շուկայական տնտեսության արմատավորման, հողի և մյուս միջոցների սեփականաշնորման, իրականացված միջոցառումների շնորհիվ նախադրյալներ ստեղծվեցին նոր հարաբերությունների ձևավորման համար, որը հանգեցրեց ինչպես գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի, ակնպես էլ համախառն ներքին արդյունքի բացարձակ աճի ավելացմանը, երկրի համախառն արդյունքի մեջ այն հասցնելով 19.7%-ի:

Եթե համեմատելու լինենք տարիների արդյունքները և այն գնահատենք դինամիկայի մեջ, ապա այն կարող ենք արձանագրել, որ նկատելի են փոփոխությունները դրական առումով:

Մշտապես խոսվել է մեր սակավահող հանրապետությունում չօգտագործվող հողերի պատճառների, դրանց արտադրության մեջ ներգրավելու միջոցառումների մասին, բայց այն երկար տարիներ չէր լուծվել: Վերջին տարիներին ՀՀ գյուղ. նախարարության կողմից ագրարային ոլորտում իրականացված բարեփոխումների, պետական աջակցության ծրագրերի միջոցով այս խնդիրը կամաց-կամաց սկսել է լուծում ստանալ, ընդ որում վերջին 5 տարիներին վերլահողերի մշակվող տարածքները ավելացել են 68000 հեկտարով, կազմելով 351300 հեկտար /449.0 հեկտարից/: Աճ է նկատվում նաև գյուղատնտեսության բոլոր ճյուղերում: Այպես հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքը կազմել է 590.000 տոննա,

կարտոֆիլը`	732.700 տոննա
բանջարեղենը`	932700 տոննա
պտուղ և հատապտուղ	291000 տոննա
խաղող`	261000 տոննա

Բավական է նշել, որ ձեռք բերումները ավելացնելու լայն հնարավորություններ կան, քանի որ 2015 թվականին ստացված աննախադեպ արդյունքները վկայում են, որ ճիշտ քաղաքականության, բնական ու տնտեսական գործոնների գնահատման միջոցով կարելի է հասնել բարձր և կայուն բերքի ապահովմանը:

Բուսաբուծության մեջ ստացված արդյունքները հետևանք են նրան, որ 2010 թվականից հետո սկսվեցին իրականացվել մեկը-մյուսին աջակցող, փոխադարձաբար կապված ծրագրեր, որոնք նպաստեցին ինչպես հողային, արտադրական, տեխնիկական և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, այլ նաև նպաստեցին ներքին շուկայում հայրենական ապրանքարտադրողների կողմից պարենային ապրանքների ծավալների և դրանց տեսակարար կշռի ավելացմանը:

Հատկանշական էր այն միջոցառումները և ծրագրերը, որոնք ուղղված էին ցորենի սերմնաբուծությանը և սերմնարտադրության զարգացմանը /ՀՀ 2010-2014 թ.թ. ցորենի սերմնաբուծության և սերմնարտադրության զագացման ծրագիր/, 2015 թ.-ից սկսված ծրագրերը (գարնանացան գարու, առվույտի, կորնգանու, եգիպտացորենի, պետական աջակցության ծրագիրը, մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական. կալիումական պարարտանյութերը ցածր գներով հողօգտագործողներին տրամադրումը, գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութերի ձեռք բերման նպատակով պետական աջակցության ծրագիր) արդյունավետ էին և նպաստեցին գյուղատնտեսական արտադրության ծավալների աճին:

ՀՀ գյուղ. նախարարության քաղաքականության առաջնահերթություններից է համդիսանում անասնաբուծության զարգացումը

ՀՀ-ում անասնաբուծությունը բնութագրվում է որպես բազմաթիվ ենթաճյուղեր ունեցող ոլորտ, որը երկրի տնտեսության մեջ զբաղեցնում է շուրջ 39-40%: Այս ոլորտում նշանակալի դեր ունի տավարաբուծությունը, խոզաբուծությունը, թչնաբուծությունը և ոչխարաբուծությունը:

ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվողների թիվը բավականին մեծ է, կազմում է շուրջ 170000 գյուղացիական և ֆերմերային տնտեսություններ, և նրանց կողմից արտադրված կաթի մինչև 95%-ը, իսկ մսի 58%-ը ստացվում է այդ ճյուղից: Նրանց միջոցով ՀՀ-ում արտադրվում է տոննա կաթ, տոննա տավարի միս:

Տոհմային գործի բարելավման և անասնապահական մթերքների ծավալների ավելացման նպատակով մշակվել է «ՀՀ տավարաբուծության զարգացման ծրագիրը» որը շարունակական բնույթ ունի և մինչև 2014 թվ. Հանրապետություն են ներկրվել 2000 գլուխ տոհմային երինջներ, որոնք տարածամկետ վճարման պայմանով տրամատրվել են տնտեսվարող սուբյեկտներին:

Ոչխարաբուծությունն ու այծաբուծությունը Հայաստանի ավանդական ճյուղերից են, որոնք զարգացած են հիմնականում նախալեռնային և լեռնային տարածաշրջաններում: Այս ոլորտի քաղաքականությունը հիմնականում իրականացվում է 2011 թ. ՀՀ կառավարության կողմից սնդուկված «ՀՀ ոչխարաբուծության զարգացման հայացակարգի հիման վրա»:

Հանրապետությունում մսի պահանջի մի մասը ապահովում է խոզաբուծության հաշվին: Տարեկան ՀՀ-ում խոզի մսի արտադրության ծավալները հասնում են շուրջ 17-17.5 հազար տոննայի:

Թռչնաբուծության բնագավառի բարելավման ուղղությամբ իրականացված միջոցառումները հնարավորություն են տվել այն դարձնելու ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցված ոլորտի: Հանրապետությունում գործող միջին և խոշոր թռչնաֆաբրիկաները կարողանում են հնարավորինս լուծել ձվի պահանջարկի խնդիրը: Սակայն դեռևս ձեռնարկված քայլեր բավարար չի կարելի համարել թռչնամսի ապահովման գործում, քանի որ դրանց ծավալները չեն գերազանցում 7-8 հազար տոննայի սահմանները, որը կազմում է ընդհանուր սպառման ծավալի 20-22 %-ը:

Իրականացված բարեփոխումների արդյունքում փոքր չափեր ունեցող տնտեսությունները ի վիճակի չեղան լուծելու երկրի առջև ծառայած մի շարք խնդիրներ, ինչպես նաև ապահովել արդյունավետ գոերծունեություն: Պետության նպատակային քաղաքականության շնորհիվ, օրենսդրական կարգավորման, մի շարք ուղենշային ծարգրեր, որոշակի մոտեցումների միջոցով ՀՀ կառավարության որոշմամբ գյուղատնտեսության համագործակցության /կոոպերատիվների/ ստեղծումը համարվեց գերակա խնդիրներից մեկը և ներկայումս այդ քաղաքականությունը շարունակվում է իրականացվել: Կոոպերատիվ շարժումը սկսվել է և արագ թափ է հավաքում հատկապես այն բանից հետո, երբ 2015 թվականի դեկտեմբերի 21-ին ընդունվեց «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը:

Գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը մեծ խթան հանդիսացավ ԳԾԻՆ-Պետական հիմնարկի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրը, որի շնորհիվ հնարավորություններ ստեղծվեցին բարելավելու սահմանամերձ և լեռնային շրջանների անասնապահական ուղղություն ունեցող տնտեսությունների կայունություն և արդյունավետ գործունեության համար, կազմակերպելով շուրջ 147 «Արոսոգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ: Եվ արդյունքները վկայում են, որ Արագածոտնի, Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի, Վայոց Ձորի նոր ստեղծված կոոպերատիվների վերջին տարիների արդյունքները նշանակալիորեն բարելավել են նրանց կարողությունների հզորացմանն ուղղված աջակցության շնորհիվ:

ՀՀ գյուղատնտեսության ջանքերի շնորհիվ լայն կապեր են ստեղծված միջազգային կազմակերպությունների հետ, որոնց հետ կնքված բազմաթիվ համաձայնագրերի շնորհիվ մի շարք դրամաշնորհային և աջակցության ծրագրեր են իրականացվում ֆերմերների շրջանում նրանց կարողությունների հզորացման ուղղությամբ:

 **Հ. Ս. ՋԱԿԱՂՅԱՆ**

03.05.2016 թ.

## ՅՈՒՅԱԿ


### Հրաչիկ Սարուխանի Ջավադյանի գիտական աշխատանքների

2010 թ. –ից սկսած

N	Անվանումը	Տպագիր թև ձևագիր	Հրատարակչություն	Էջ	Համահեղինակներ
1	2	3	4	5	6
1	ՀՀ_ում գյուղատնտեսական կոպերատիվների ստեղծման , գործող կոպերատիվների զարգացման ու կատարելագործման անհրաժեշտությունը	հրատ	< ՀՀ Գյուղատնտեսության ոլորտում կոպերացիայի զարգացման հիմնախնդիրները > գիտաժողովի նյութեր 2010 էջ 14-24	11	
2	Գյուղատնտեսական կոոպերացման հիմնական դրույթները	հրատ	Երևան ԶՊԱԶ 2011 99 էջ	99	
3	Իրանի ավտոմոբիլաշինության քաղաքականությունը և հեռանկարները գլոբալիզացիայի պայմաններում	հրատ	1-ին միջազգային գիտական կոնֆերանսի նյութեր Իրանի Իսլամական Հանրապետություն 236 էջ 2011	1	թեգիստներ
4	Ագրարային ոլորտի տեղեկատվական-խորհրդատվական ծառայության պահանջարկի վերլուծությունը ՀՀ օրինակով	հրատ	«Հայաստան, ֆինանսներ և և էկոնոմիկա » 16-18 էջ 2011	3	Ս.Բիլբուլյան
5	Analyses of communication barriers during consultation processes	published	Proceedings Volume 50, book 5.1 Economics and management, Ruse,	5	H. Gevorgyan

			2011		
6	«ՀՀ խորհրդատվական ագրարային համա-կարգի բարեփոխումների ուղղությունները», հիմնական	հրատ.	Ագրոգիտություն, 7-8, 2012թ.,	5	Ի.Փանոսյան Ա. Ոսկանյան,
7	Խորհրդատվության արդյունավետության բարձրացումը՝ որպես գյուղական համայնքների կարևոր ուղղություն կարգացման ռազմավարական ուղղություն	հրատ.	Հայաստանի տնտեսագիտական միության գիտաժողով, օնլայն հոդվածներ	7	Հ.Գևորգյան
8	Գյուղատնտեսության խորհրդատվության արդյունավետության բարելավման և բարեփոխման ուղղությունների կադրերով ապահովման և Կոտայքի ԳԱՄԿ-ի օրինակով	հրատ.	Ագրոգիտություն, 2013թ. N 1-2	6	Ի.Փանոսյան Գ.Քեշիշյան
9	Ագրարային խորհրդատվական ծառայությունների կադրերով ապահովման և բարեփոխման ուղղությունների կադրերով ապահովման և Կոտայքի ԳԱՄԿ-ի օրինակով	Հրատ.	Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան 2013թ.		Հ. Ջավադյան Ի. Փանոսյան Հ. Գզոդյան
10	Գյուղատնտեսության կոոպերացիան օրենսդրության կատարելագործման ուղիները	տպագրված	Материалы международной научной конференции по проблемам продовольственной обеспеченности и биоразнообразия / НАУА, Пед. Кол.: Д. П. Петросян и др.- Ереван, Изд-во НАУА, 2014.	5	Վ.Համբարձումյան
11	ՀՀ-ում գյուղատնտեսական կոոպերատիվ-փոխադարձ ապահովագրական ընկերություն-խորհրդատու ստեղծման նպատակահարմարությունը	տպագրված	Материалы международной научной конференции по проблемам продовольственной обеспеченности и	5	Դ.Ալավերդյան, Ի.Փանոսյան

			биоразнообразия / НАУА, Пед. Кол.: Д. П. Петросян и др.- Ереван, Изд-во НАУА, 2014.		
12	Agrarian advisory system as an instrument of agriculture development	published	The second international conference on Economic Sciences, Austria, Vienna, 2014, p. 79-83	5	I . Panosyan
13	Ագրարային խորհրդատվական համակարգերի զարգացման փորձը և կիրառման հնարավորությունները ՀՀ-ում (ԵՄ երկրների օրինակով)	տպագրված	«Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, 2014, Երևան, էջ 126-130,	5	Դ.Ալավերդյան Բ. Փանոսյան
14	Ագրարային ոլորտի կարիքների բացահայտման World Cafe մեթոդը և անցկացման կարգը	տպագիր	Международной молодежной конференции “Инновационные подходы в области науки”, Армения, г. Цахкадзор, 2014, 136-141	6	Բ. Փանոսյան Է. Նարինյան



Յ. Ս. Զավադյան

03. 05. 2016